

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ռ ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 26-ի «Փրկարարական ծառայողին ներկայացվող մասնագիտական, ֆիզիկական պատրաստվածության, առողջական վիճակի հետ կապված պահանջները սահմանելու մասին» N 55-Ն որոշման N 1 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Փրկարարական ծառայության ծառայողներին, ըստ տարիքային խմբերի ներկայացվում են ֆիզիկական պատրաստվածության հետևյալ պահանջները՝

1) արական սեռի ծառայողներ՝

NN ը/կ	Վարժության անվանումը	Վարժության կատարման պայմանները (կարգը)	Գնահատականը (միավորը)	Տարիքային խմբերը						
				1-ին խումբ (24 տարե- կան և ցածր)	2-րդ խումբ (25-29 տարե- կան)	3-րդ խումբ (30-34 տարե- կան)	4-րդ խումբ (35-39 տարե- կան)	5-րդ խումբ (40-44 տարե- կան)	6-րդ խումբ (45-49 տարե- կան)	7-րդ խումբ (50 տարե- կան և բարձր)
Նորմացույց 1										
1.	Վազք՝ 100 մետր (վայրկյան)	Անցկացվում է մարզադաշտի վազքուղում կամ ամեն տեսակի ծածկույթով հարթ տարածքում	բավարար/ 3	15.5	16.0	16.5	17.0	17.5	18.0	18.5
			լավ/ 4	15.0	15.5	16.0	16.5	17.0	17.5	18.0
			գերազանց/ 5	14.5	15.0	15.5	16.0	16.5	17.0	17.5
2.	Վազք՝ 60 մետր (վայրկյան)	Անցկացվում է մարզադաշտի վազքուղում կամ ամեն տեսակի ծածկույթով հարթ տարածքում	բավարար/ 3	8.8	9.8	10.2	10.6	11.0	11.4	11.8
			լավ/ 4	8.4	9.4	9.8	10.2	10.6	11.0	11.4
			գերազանց/ 5	8.0	9.0	9.4	9.8	10.2	10.6	11.0
Նորմացույց 2										

3.	Ձգումներ՝ պտտաձողի վրա (անգամ)	Կատարվում է պտտաձողից ուղիղ ձեռքերով կախված վիճակում: Ձգվելիս ծնոտը պետք է անցկացնել պտտաձողից վեր	բավարար/ 3	10	8	6	4	3	2	1
			լավ/ 4	12	10	8	6	4	3	2
			գերազանց/ 5	14	12	10	8	6	4	3
4.	Մեղմումներ՝ հենում-պատկած (անգամ)	Ձեռքի ծալում և ուղղում, հենում պատկած դրությունից	բավարար/ 3	45	40	35	30	25	20	15
			լավ/ 4	50	45	40	35	30	25	20
			գերազանց/ 5	55	50	45	40	35	30	25
Նորմացույց 3										
5.	Վազք՝ 1000 մետր (րոպե, վայրկյան)	Անցկացվում է ցանկացած տեղանքում ընդհանուր կամ առանձին՝ բարձր մեկնարկից	բավարար/ 3	4.10	4.20	4.30	4.40	4.50	5.00	5.10
			լավ/ 4	3.50	4.00	4.10	4.20	4.35	4.50	5.00
			գերազանց/ 5	3.30	3.40	3.50	4.00	4.20	4.40	4.50
6.	Վազք՝ 3000 մետր (րոպե, վայրկյան)	Անցկացվում է ցանկացած տեղանքում ընդհանուր կամ առանձին՝ բարձր մեկնարկից	բավարար/ 3	14.00	15.00	16.00	17.15	18.30	19.45	21.00
			լավ/ 4	13.30	14.30	15.30	16.45	18.00	19.15	20.30
			գերազանց/ 5	13.00	14.00	15.00	16.15	17.30	18.45	20.00
7.	Լող՝ 100 մետր (րոպե, վայրկյան)	Կատարվում է ցանկացած լողաձևով: Անցկացվում է լողավազաններում կամ հատուկ կահավորված ջրավազաններում	բավարար/ 3	2.50	3.00	3.20	3.40	4.00	4.20	4.50
			լավ/ 4	2.40	2.50	3.00	3.20	3.40	4.00	4.30
			գերազանց/ 5	2.30	2.40	2.50	3.00	3.20	3.40	4.10
Նորմացույց 4										
8.	Տեղից հեռացատկ (մետր)	Կատարվում է տեղից երկու ոտքի միաժամանակյա հրումով: Անցկացվում է ամեն տեսակի ծածկույթով հարթ տարածքում	բավարար/ 3	2.40	2.25	2.10	1.95	1.80	1.65	1.40
			լավ/ 4	2.60	2.45	2.30	2.15	2.00	1.85	1.60
			գերազանց/ 5	2.80	2.65	2.50	2.35	2.20	2.05	1.80
9.	Տասնակի ցատկ (մետր)	Կատարվում է տեղից հեռացատկով, բաղկացած է հրում, ճախրում և վայրէջք փուլերից, որը կրկնվում է 9-ը քայլի ընթացքում, 10-րդ քայլը ցատկափոսի մեջ	բավարար/ 3	24	23	22	21	20	19	18
			լավ/ 4	25	24	23	22	21	20	19
			գերազանց/ 5	26	25	24	23	22	21	20
Նորմացույց 5										
10.	Ռոմբերգի դիրք (վայրկյան)	Կանգնելով ցանկացած ոտքի վրա, ազատ ոտքի կրունկը դնել մյուս ոտքի ծնկին, ձեռքերից մեկը պար-	բավարար/ 3	12	11	10	9	8	7	5
			լավ/ 4	20	18	16	14	12	10	8

	գել առաջ մյուսը վեր, որից հետո փակել այքերը	գերազանց/ 5	30	28	26	24	22	20	15
--	---	----------------	----	----	----	----	----	----	----

2) իզական սեռի ծառայողներ՝

NN ը/կ	Վարժության անվանումը	Վարժության կատարման պայմանները (կարգը)	Գնահա- տականը (միավորը)	Տարիքային խմբերը						
				1-ին խումբ (24 տարե- կան և ցածր)	2-րդ խումբ (25-29 տարե- կան)	3-րդ խումբ (30-34 տարե- կան)	4-րդ խումբ (35-39 տարե- կան)	5-րդ խումբ (40-44 տարե- կան)	6-րդ խումբ (45-49 տարե- կան)	7-րդ խումբ (50 տարե- կան և բարձր)
Նորմացույց 1										
1.	Վազք՝ 100 մետր (վայրկյան)	Անցկացվում է մար- զադաշտի վազքու- ղում կամ ամեն տեսակի ծածկույթով հարթ տարածքում	բավարար/ 3	18.5	19.0	19.5	20.5	23.0	27.0	30.0
			լավ/ 4	18.0	18.5	19.0	20.0	22.0	25.0	28.0
			գերազանց/ 5	17.5	18.0	18.5	19.5	21.0	23.0	26.0
2.	Վազք՝ 60 մետր (վայրկյան)	Անցկացվում է մար- զադաշտի վազքու- ղում կամ ամեն տեսակի ծածկույթով հարթ տարածքում	բավարար/ 3	11.0	11.5	12.0	12.5	13.0	13.5	14.0
			լավ/ 4	10.5	11.0	11.5	12.0	12.5	13.0	13.5
			գերազանց/ 5	10.0	10.5	11.0	11.5	12.0	12.5	13.0
Նորմացույց 2										
3.	Սեղմուններ՝ հենուս- պատկած (անգամ)	Ձեռքի ծալում և ուղղում, հենուս պատկած դրությունից	բավարար/ 3	13	12	11	10	9	8	7
			լավ/ 4	14	13	12	11	10	9	8
			գերազանց/ 5	15	14	13	12	11	10	9
4.	Մարմնի բարձրացում մեջքի վրա պատկած (անգամ)	Ելման դիրք՝ ձեռքերը ծոծրակին միացրած, ոտքերը՝ ծնկերը 90° ծալված, և ուսերը՝ սեղմած հատակին: Կատարվում է արմունկների դիպչում ազդրերին՝ վերադառնալով ելման դիրք	բավարար/ 3	27	24	21	17	14	11	8
			լավ/ 4	30	27	24	21	17	14	11
			գերազանց/ 5	33	30	27	24	21	17	14
Նորմացույց 3										
5.	Վազք՝ 1000 մետր (րոպե, վայրկյան)	Անցկացվում է ցան- կացած տեղանքում ընդհանուր կամ առանձին՝ բարձր մեկնարկից	բավարար/ 3	5.10	5.30	6.00	6.30	7.00	7.30	8.00
			լավ/ 4	4.40	5.10	5.30	6.00	6.30	7.00	7.30
			գերազանց/ 5	4.10	4.40	5.10	5.30	6.00	6.30	7.00
6.	Լող՝ 100 մետր (րոպե, վայրկյան)	Կատարվում է ցանկացած լողաձևով:	բավարար/ 3	3.30	3.50	4.20	5.00	5.40	6.20	6.50
			լավ/ 4	3.20	3.30	3.50	4.20	5.00	5.40	6.20

		Անցկացվում է լողավազաններում կամ հատուկ կահավորված ջրավազաններում	4							
			գերազանց/ 5	3.10	3.20	3.30	3.50	4.20	5.00	5.40
Նորմացույց 4										
7.	Տեղից հեռացատկ (մետր)	Կատարվում է տեղից երկու ոտքի միաժամանակյա հրումով: Անցկացվում է ամեն տեսակի ծածկույթով հարթ տարածքում	բավարար/ 3	1.70	1.60	1.50	1.30	1.20	1.10	1.00
			լավ/ 4	1.90	1.80	1.70	1.60	1.50	1.40	1.30
			գերազանց/ 5	2.10	2.00	1.90	1.80	1.70	1.60	1.50
8.	Հեռացատկ թափավազքից (մետր)	Վարժությունը բաղկացած է չորս փուլից՝ թափավազք, հրում, ճախրում և վայրէջք ցատկափոս	բավարար/ 3	3.25	3	2.75	2.5	2.25	2.0	1.75
			լավ/ 4	3.5	3.25	3.0	2.75	2.5	2.25	2.0
			գերազանց/ 5	3.75	3.5	3.25	3	2.75	2.5	2.25
Նորմացույց 5										
9.	Ռոմբերգի դիրք (վայրկյան)	Կանգնելով ցանկացած ոտքի վրա, ազատ ոտքի կրունկը դնել մյուս ոտքի ծնկին, ձեռքերից մեկը պարզել առաջ մյուսը վեր, որից հետո փակել այքերը	բավարար/ 3	10	9	8	7	6	5	4
			լավ/ 4	18	16	14	12	10	8	6
			գերազանց/ 5	28	26	24	22	20	16	12

Փրկարարական ծառայողները ֆիզիկական պատրաստվածության նորմացույցներից ստուգարք են հանձնում յուրաքանչյուր տարի:

Ստուգարքի արդյունքները հաշվի են առնվում փրկարարական ծառայողի ատեստավորման ժամանակ:

Ստուգարքներն ընդունվում են Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի հրամանով՝ համապատասխան հանձնաժողովի կողմից և հատկացված վայրում:

Յուրաքանչյուր նորմացույցից ընտրվում է մեկական վարժություն՝ հաշվի առնելով եղանակային պայմաններն ու անցկացման վայրը:

Փրկարարական ծառայողները ստուգարքին ներկայանում են ծառայողական համազգեստով, թույլատրվում է կրել միայն մարզական կոշիկ:

Ընտրված 5 վարժությունից թույլատրվում է անբավարար գնահատական ստանալ միայն մեկից:

Ստուգարքի գնահատումը կատարվում է՝ 23 միավոր և բարձր՝ 5 (գերազանց), 19-22 միավոր՝ 4 (լավ), 14-18 միավոր՝ 3 (բավարար), 13 միավոր և ցածր՝ 2 (անբավարար):

Ստուգարքով «Անբավարար» գնահատված փրկարարական ծառայողը պարտավոր է վեցամսյա ժամկետում վերահանձնել ֆիզիկական պատրաստվածության նորմացույցները:

Փրկարարական ծառայության անցնելու համար դիմած քաղաքացին ստուգարք է հանձնում սույն հավելվածի համապատասխան աղյուսակում նշված իր տարիքային խմբին ներկայացվող ֆիզիկական պատրաստվածության պահանջների համաձայն:».

2) 5-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: